ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թվականի N 77-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Եփրեմ Գևորգի Աշոտյանի կողմից «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ բնակավայրի 12-րդ փողոցի թիվ 19/2 հասցեում ինքնակամ կառուցված շինության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջների պահպանումը պարզելու հանգամանքը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եփրեմ Գևորգի Աշոտյանի կողմից «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ բնակավայրի 12-րդ փողոցի թիվ 19/2 հասցեում ինքնակամ կառուցված շինության փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում 2026 թվականի փետրվարի 10-ին ժամը 11:30-ին ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում:
2. Հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել Եփրեմ Աշոտյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. փետրվարի 04
ք. Ճամբարակ